



California's protection & advocacy system

Խտրականության մասին բժշկական թերթիկ. Հատուկ փոխադրամիջոց

2019 թ. սեպտեմբեր, հրատ. #7143.10 - Armenian

Հատուկ փոխադրամիջոց

Հատուկ փոխադրամիջոցը սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար տրանսպորտային ծառայություն է, որոնք ի վիճակի չեն օգտվել հասարակական տրանսպորտի ծառայություններից: Սահմանափակ հնարավորություններով ամերիկացիների մասին օրենքի (ADA) համաձայն՝ հասարակական տրանսպորտի ընկերությունները պարտավոր են նաև հատուկ փոխադրամիջոցի ծառայություններ մատուցել:

Փոխադրող ընկերությունը պետք է հատուկ փոխադրամիջոցի ծառայություններ մատուցի ավտոբուսի երթուղուց կամ երկաթուղային կայարանից 3/4 մղոն հեռավորության սահմաններում: Այս ծառայությունը պետք է գործի նույն օրերին և նույն ժամերին՝ ինչպես սովորական փոխադրող ծառայությունները: Հատուկ փոխադրամիջոցի ծառայությունների համար ձեզանից հնարավոր է ավելի մեծ գումար գանձվի, բայց այդ ուղեվարձը չի կարող սովորական ուղեվարձի կրկնակի չափից ավել լինել:

Հատուկ փոխադրամիջոցի ծառայությունների իրավասությունը

Դուք հատուկ փոխադրամիջոցի իրավունք ունեք, եթե ձեր հաշմանդամության պատճառով չեք կարողանում օգտվել հանրային փոխադրամիջոցներից: Պարզելու համար՝ արդյոք կարող եք օգտվել հասարակական տրանսպորտից, փոխադրող ընկերությունները հաշվի

են անում մի շարք գործոններ: Այս գործոնները ներառում են. դեպի կանգառը և հետ քայլելու կամ գնալու հնարավորությունը, կայարան ելումուտ ունենալու հնարավորությունը, կանգառի ազդանշանային արձագանքելու հնարավորությունը և անսպասելի իրավիճակներին իրեն տիրապետելու ունակությունը: Հաշմանդամների կրթության և իրավունքների պաշտպանության հիմնադրամ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <https://dredf.org/ADAtg/elig.shtml#appendix1>

Մատուցվող ծառայություն

Կապվեք ձեր տեղական փոխադրող ընկերության հետ՝ հատուկ հանրային փոխադրամիջոցից օգտվելու հնարավորություն ստանալու համար: Յուրաքանչյուր ընկերություն պատասխանատու է իր վերանայման գործընթացը վերսկսելու համար, ուստի հանրային փոխադրող ընկերությունների պահանջները կարող են տարբեր լինել: Փոխադրող ընկերությունների մեծ մասը կունենան դիմում-հայտով վեբ-կայք, որը կարող էք լրացնել և ներկայացնել առցանց: Կարող եք նաև նամակ ուղարկել այն ընկերությանը, որից հայցում եք ծառայությունը: Այս ձևաթերթի վերջում ներառված է նմուշային նամակ: Փոխադրող ընկերությունը հատուկ փոխադրամիջոցի ծառայություններ մատուցելու հարցման համար ձեզնից չպետք է գումար գանձի:

Փոխադրող ընկերությունը հատուկ փոխադրամիջոցի ծառայություններ մատուցելու հարցման համար ձեզնից կարող է բժշկի թուղթ խնդրել: Ընկերությունը կարող է նաև խնդրել ձեզ՝ անձամբ մասնակցել ստուգմանը կամ թեստավորմանը՝ պարզելու, արդյոք իրավասու եք:

Փոխադրող ընկերությունը ձեր դիմումին պետք է պատասխանի 21 օրվա ընթացքում: Եթե ընկերությունը ժամանակին չի արձագանքում, ապա հատուկ փոխադրամիջոցի ծառայությունները պետք է գործեն: Ծառայությունները կարող են դադարեցվել, եթե ձեր դիմումը ի վերջո մերժվի: Հատուկ փոխադրամիջոցի ծառայություններ մատուցող ընկերությունը ձեզ պետք է պարզաբանի՝ ձեր դիմումը մերժելու պատճառները:

Եթե ձեր դիմումը հաստատված է, փոխադրող ընկերությունը պետք է ձեզ գրավոր ծանուցում հղի, որը ներառում է առնվազն հետևյալը.

- ձեր անունը,
- մատակարարող փոխադրող ընկերության անունը,

- հատուկ փոխադրամիջոցի ծառայությունները համակարգողի հեռախոսահամարը,
- իրավասության ժամկետի ավարտի ամսաթիվը (սովորաբար մեկից երեք տարի, և դուք կարող եք դիմել՝ դրանից հետո ձեր ծառայությունը շարունակելու համար), և
- ձեր իրավասության ցանկացած պայման կամ սահմանափակում: Օրինակ՝ գուցե իրավասու լինեք հատուկ փոխադրամիջոցի ծառայությունների մեկ երթուղու համար, բայց ոչ այլ երթուղիների:

Կանոնավոր փոխադրումներ

Հաստատվելուց հետո դուք կարող եք տեղափոխվել՝ հետևելով ձեր փոխադրող ընկերության կանոնավոր փոխադրման ընթացքին: Փոխադրող ընկերություններից պահանջվում է առաջարկել հաջորդ օրվա երթուղին, և պարտավորվում է վերցնել ձեզ՝ դիմելու պահից մեկ ժամվա ընթացքում:

Փոխադրող ընկերությունները պետք է թույլ տան տեղափոխվել անձնական սպասավորի հետ: Անձնական սպասավորը մեկն է, ով օգնում է ձեզ որոշակի գործողություններ կատարել՝ թե գրասանքի ընթացքում, թե ձեր գտնվելու վայրում: Փոխադրող ընկերությունները ձեր ուղեկցորդից չպետք է ուղեվարձ գանձեն: Եթե ձեզ հարկավոր է սպասավոր կամ կարծում եք, որ երբեմն կարող է անհրաժեշտ լինել սպասավոր, ապա այդ մասին պետք է իրազեկեք ձեր դիմումի մեջ:

Փոխադրող ընկերությունները պետք է նաև թույլ տան ձեզ ունենալ առնվազն մեկ ուղեկից: Ուղեկիցն այն մարդն է, ով ճանապարհորդում է ձեզ հետ, որպեսզի ձեզ ընկերակցի կամ գալիս է որպես ընկեր: Ձեր սպասավորը ուղեկից չի համարվում: Փոխադրող ընկերությունն իրավունք ունի ձեր ուղեկից ուղեվարձը գանձել, բայց այդ ուղեվարձը չի կարող սովորական ծառայության ուղեվարձից ավել լինել:

Մերժումներ և ծառայության դադարեցում

Կարող եք բողոքարկել հատուկ փոխադրամիջոցի ծառայության մերժումը: Բողոքարկումը պետք է ձեռնարկվի մերժումից հետո՝ մինչև 60 օրվա ընթացքում: Որոշ ընկերություններ ձեզ կարող են ավելի շատ ժամանակ տրամադրել՝ բողոքարկման համար: Կարող եք բողոքարկել անձամբ կամ գրավոր:

Փոխադրող ընկերությունը 30 օր ունի ձեր բողոքին պատասխանելու համար: Պատասխանները պետք է լինեն գրավոր: Եթե ընկերությունը

Ժամանակին չի արձագանքում, ապա նա պետք է ծառայություններ մատուցի, քանի դեռ չի մերժում բողոքարկումը:

Փոխադրող ընկերությունը կարող է դադարեցնել կամ կասեցնել ձեր ծառայությունները, եթե ներգրավված եք բռնի, լրջորեն խանգարող կամ անօրինական գործողությունների մեջ, կամ եթե ունեք կանոնավոր երթուղիներից բացակայության օրինակ: Դժբախտ պատահարները կամ միանգամյա միջադեպերը օրինակ չեն: Միայն դիտավորյալ, կրկնվող կամ կանոնավոր գործողությունները պետք է համարվեն կորած երթուղիների օրինակ:

Փոխադրող ընկերությունը պարտավոր է գրավոր տեղեկացնել ձեզ, եթե նա նախատեսում է դադարեցնել կամ կասեցնել ծառայությունները: Հայտարարության մեջ պետք է նշվեն այն հատուկ ծառայությունները, որոնք նրանք կասեցնում են, և ներկայացնեն կասեցման հիմքերը: Ծանուցման մեջ պետք է նաև ներառել ծառայության վերսկսման ամսաթիվը: Փոխադրող ընկերությունը պետք է հնարավորություն ընձեռնի բողոքարկել կասեցումը: Ծառայությունները պետք է շարունակվեն բողոքարկման ընթացքում:

Փոխադրող ընկերությունները կարող են պահանջել վերահաստատել իրավասությունները: Կարող եք կորցնել հատուկ փոխադրամիջոցի ծառայությունները, եթե ընկերությունը որոշի, որ այլևս իրավասու չեք:

Տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ

Դուք կարող եք հավելյալ տեղեկություններ ստանալ հատուկ փոխադրամիջոցի ծառայությունների, իրավասության չափորոշիչների և ծառայությունների համար դիմելու մասին այստեղ`

- Դաշնային փոխադրամիջոցների ադմինիստրատիվ կայք.
 - FTA շրջաբերական ADA-փոխադրման գործակալությունների ուղեցույցերի վերաբերյալ`
https://www.transit.dot.gov/sites/fta.dot.gov/files/docs/Final_FT_A_ADA_Circular_C_4710.1.pdf
- Հաշմանդամների կրթության և իրավունքների պաշտպանության հիմնադրամի կայք.
 - ADA տարեցների և հաշմանդամների տեղափոխման պահանջների համապատասխանության հրատարակություն`
<https://dredf.org/news/publications/ada-paratransit-eligibility/>
 - ADA տարեցների և հաշմանդամ անձանց տեղափոխման թեմատիկ ուղեցույցեր` <https://dredf.org/ADAteg/elig.shtml>

Վարչական բողոքներ

Քաղաքացիական իրավունքի դաշնային փոխադրման կառավարման (FTA) գրասենյակը պատասխանատու է դաշնային հատուկ փոխադրամիջոցների կանոնակարգերի վերահսկման համար: Եթե կարծում եք, որ ձեր փոխադրող ընկերությունը չի պահպանել այդ կանոնակարգերը, ոչ պատշաճ կերպով մերժել է ձեզ ծառայություն մատուցել կամ չի առաջարկել ձեզ բողոքարկել իր որոշումը, կարող եք բողոք ներկայացնել FTA-ին: FTA-ն կուսումնասիրի բողոքները և կփնտրի փոխադրող ընկերության կողմից ADA-ի ցանկացած խախտում: Հետագայում FTA-ն փոխադրող ընկերությանը կտեղեկացնի այդ խախտումների մասին և ժամկետ կսահմանի, որպեսզի ընկերությունը դիմի:

FTA-ի բողոքները.

Federal Transit Administration
Office of Civil Rights
Attention: Complaint Team
East Building, 5th Floor – TCR
1200 New Jersey Avenue, SE
Washington, DC 20590

Բողոքարկման ձև: <https://www.transit.dot.gov/regulations-and-guidance/civil-rights-ada/fta-civil-rights-complaint-form>

Հեռախոսահամար՝ 1-888-446-4511

Արդար զբաղվածության և բնակարանային ապահովման դեպարտամենտը (DFEH) կիրառում է քաղաքացիական իրավունքների մասին պետական օրենքները: ADA-ի ցանկացած խախտում նաև պետական օրենքի խախտում է: Եթե կարծում եք, որ փոխադրող ընկերությունը խտրականություն է իրականացրել ձեր նկատմամբ, կարող եք նաև բողոք ներկայացնել DFEH-ին: DFEH-ի բողոքները պետք է ներկայացվեն խտրականություն իրականացնելու մեկ տարվա ընթացքում: Դուք կարող եք DFEH-ի որոշումը բողոքարկել DFEH-ի տնօրենին՝ որոշում կայացնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում: Stn 2 C.C.R.10033 բաժին:

DFEH-ի բողոքները.

Առցանց լրացում. <https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/>

Ջեռախոսահամար՝(800) 884-1684

Ջեռատիպ՝(800) 700-2320

Փոստ.Չանգահարեք (800) 884-1684 հեռախոսահամարով և ինդրեք համապատասխան բողոքարկման ձևաթուղթը տպել և վերադարձնել:Ինդրում ենք լրացուցիչ ժամանակ տրամադրել նամակ հղելուն և վերամշակմանը:

Դատավարություն

Վերը քննարկված օրենքների խախտումները կարող են իրականացվել նաև մասնավոր դատական գործերի միջոցով: Խնդրում ենք նկատի ունենալ, որ սահմանափակումների կանոնադրությունը սահմանափակում է դատական գործ հարուցելու ժամկետները, և որ դուք կարող եք ուղղակի կորցնել բողոքը, եթե չգործեք սահմանափակման գործող կանոնադրության շրջանակներում: Այս ժամկետները կարող են կազմել խտրականության պահից երկու տարի: Եթե դուք հետաքրքրված եք դատական գործ հարուցելով, ապա պետք է հնարավորինս շուտ խորհրդակցեք փաստաբանի հետ:

Եթե դուք հայցում եք ավելի քան 10,000 ԱՄՆ դոլարի դրամական վնաս, այլ տարբերակ է՝ Փոքր պահանջների դատարանում ներկայացնել խտրականության դեպք: Կիրառվելու են վերը նշված վաղեմության ժամկետները:

Դուք չեք կարող օգտագործել փաստաբան, եթե դուք գնում եք փոքր հայցերի դատարան: Ահա Կալիֆոռնիայի «Հաշմանդամություն ունեցողների իրավունքներ» հրատարակության հղումը, որը բացատրում է խտրականության դեպքերի համար փոքր պահանջներ օգտագործելու գործընթացը.

<https://www.disabilityrightsca.org/publications/a-guide-to-small-claims-court-how-to-sue-if-a-business-or-landlord-discriminates>

Մենք ուզում ենք լսել ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումների վերաբերյալ հետևյալ դիմումը և տեղեկացնել, թե որքանով այն դուր եկավ ձեզ: [Վերցրեք հարցաթերթիկը](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք. 800-776-5746 կամ լրացրեք [աջակցության ձևաթուղթը](#): Մնացած բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Չյուսիսային Կալիֆորնիա); 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա):

«Կալիֆոռնիայի հաշմանդամության իրավունքներ»-ը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրների կողմից, ֆինանսավորողների ամբողջական ցանկի համար այցելեք՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>:

Նմուշ նամակ՝ հատուկ փոխադրամիջոցի ծառայություններ պահանջելու համար

[Ամսաթիվ]

Հարգելի [Փոխադրող ընկերություն].

Ես գրում եմ՝ խնդրելով հատուկ փոխադրման ծառայություններ իմ [հաշմանդամության / հաշմանդամությունների] / պատճառով, ես ի վիճակի չեմ օգտվել նշված երթուղու համակարգից, քանի որ [նկարագրել նախկին տրանսպորտային միջոցների օգտագործման խոչընդոտները՝ կանգ առնելը հնարավոր չէ]:

Իմ [բժիշկ / հոգեբույժ / հոգեբան / թերապևտ / սոցիալական աշխատող / մասնագիտական թերապևտ / մեկ այլ անհատ (նկարագրեք)] նշել է հատուկ փոխադրման ծառայությունը, որն անհրաժեշտ է իմ հաշմանդամության համար: Խնդրում եմ, տեսնել կից նամակը [բժշկի կամ մասնագետի անունից]:

Ես կցանկանայի պարբերաբար օգտվել հատուկ փոխադրման ծառայություններից՝ հետևյալ ուղևորությունների համար: [Երթուղու օրերը / ժամերը, իջնելու և բարձրանալու վայրերը]:

[Ինձ պետք է օգնություն ցուցաբերի (որոշ / բոլոր) ուղևորությունների ժամանակ՝ ինձ օգնելու համար (ուղևորության ընթացքում / իմ գտնվելու վայրում): (Բացատրեք սպասավորի անհրաժեշտությունը):]

Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են, որ փոխադրող ընկերությունները հատուկ փոխադրման ծառայություններ մատուցեն սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց, ովքեր ի վիճակի չեն օգտվել նշված երթուղու համակարգից: Խնդրում եմ պատասխանել այս դիմումին 21 օրվա ընթացքում, ինչպես դա պահանջվում է օրենքով: Հարցեր ունենալու դեպքում, ազատ դիմեք ինձ [ձեր հեռախոսահամարը և / կամ էլ փոստի հասցեն]: Շնորհակալություն

Հարգանքներով՝

[Ձեր անունը]

[Ձեր հասցեն]

Աջակցության նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [բիզնես].

Ես [անունով] [բժիշկ / հոգեբույժ / հոգեբան / թերապետ / սոցիալական աշխատող/ աշխատանքային թերապետ / այլ] եմ և ծանոթ եմ [սրա] վիճակին:

[Նա] ունի հաշմանդամություն, որն առաջացնում է որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ: Այս սահմանափակումները ներառում են [թվարկել ֆունկցիոնալ սահմանափակումները, որոնք պահանջում են պահանջվող հատուկ փոխադրման ծառայությունները]:

[Անունը] ի վիճակի չէ օգտվել նշված երթուղու համակարգից: [Նկարագրեք, թե որոնք են խոչընդոտները, որոնք կանխում են հասարակական տրանսպորտից օգտվելը: Եթե անհրաժեշտ է սպասավոր, ապա նկարագրեք սպասավորի անհրաժեշտությունը]:

Շնորհակալ եմ այս հատուկ փոխադրման ծառայությունը [Անուն]-ին մատուցելու համար:

Հարգանքներով՝

[Անունը և պաշտոնը]